

**ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ ԿՈՂՄԻՑ ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Իրավական ակտերի կամ վեճերը քննող մարմինների՝ դատարանների, արբիտրաժների և այլ մարմինների, կայացրած որոշումների կատարումն ապահովելու համար իրավունքի տեսության մեջ ձևավորվել է իրավաբանական պատասխանատվության ինստիտուտը, որ հետապնդում է երկու հիմնական նպատակ, այն է՝ պատժել իրավախախտ սուբյեկտին՝ կանխելով հետագայում նման վարքագծի կրկնությունը, և երկրորդ՝ վերականգնել խախտված իրավունքները:

Առևտրի համաշխարհային կազմակերպության (այսուհետ նաև ԱՀԿ) շրջանակներում ընդունված «Վեճերի կարգավորումը ղեկավարող կանոնների և ընթացակարգերի մասին» համաձայնագրի /այսուհետ նաև Համաձայնագիր/ 21-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է Վեճերը քննող մարմնի կողմից կայացված որոշումների և խորհրդատվական եզրակացությունների արագ կատարման կարևորությունը:

Միաժամանակ, քաջ գիտակցելով այն հանգամանքը, որ կայացված որոշումների և խորհրդատվական եզրակացությունների կատարումը հաճախ պահանջում է իրավական և տնտեսական բնույթ ունեցող գործողությունների համախումբ, ինչն պահանջում է որոշակի ժամանակ մինչև որոշումների ամբողջական կատարումը, «Վեճերի կարգավորումը ղեկավարող կանոնների և ընթացակարգերի մասին» համաձայնագրի 21-րդ հոդվածի 3-րդ կետը անդամ պետություններին տրամադրում է որոշումների կատարման համար ողջամիտ ժամկետ: Սակայն նույնիսկ ողջամիտ ժամկետի տրամադրումը հաճախ չի հանգեցնում կայացված որոշումների և խորհրդատվական եզրակացությունների ամբողջական կատարման, ինչի

---

<sup>1</sup> ԵՊՀ միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի.գ.թ., դոցենտ Վիգեն Քոչարյան:

արդյունքում էլ ԱՀԿ-ի շրջանակներում ևս նախատեսված են անբարենպաստ իրավական հետևանքներ այն պետությունների համար, որոնք չեն կատարում Վեճերը քննող մարմնի կայացրած որոշումները: Սակայն այս ոլորտում կիրառվող պատասխանատվության միջոցները, պայմանավորված ԱՀԿ-ի շրջանակներում կարգավորվող հարաբերությունների առանձնահատկություններով, որոշակի առումով տարբերվում են մեզ մինչ այդ ծանոթ պատասխանատվության միջոցներից: Ընդ որում այդ տարբերությունը նախևառաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ ԱՀԿ-ի և անդամ-պետությունների համար էական նշանակություն ունի ԱՀԿ-ի շրջանակներում գործող համաձայնագրերին հակասող գործողության կամ անգործության դադարեցումը սեղմ ժամկետում, իսկ կիրառվող պատասխանատվության միջոցները զուտ նպատակ են հետապնդում ազդել իրավախախտ պետության վրա՝ ստիպելով դադարեցնել իրավախախտ գործողությունը և իր գործողությունները համապատասխանեցնել ԱՀԿ-ի շրջանակներում կնքված համաձայնագրերին:

Հետևաբար ԱՀԿ-ի շրջանակներում կիրառվող պատասխանատվության միջոցներն ավելի շատ լրացնող բնույթ ունեն և նպատակ են հետապնդում կիրառվելու արդյունքում ստիպել իրավախախտ պետությանը դադարեցնել իրավախախտումը:

Այսպես, «Վեճերի կարգավորումը ղեկավարող կանոնների և ընթացակարգերի մասին» համաձայնագրի 22-րդ հոդվածը սահմանում է որոշումների չկատարման արդյունքում կիրառվող պատասխանատվության երկու տեսակ՝ փոխհատուցում և զիջումների և այլ պարտավորությունների դադարեցում: Ընդ որում՝ Համաձայնագրի 22-րդ հոդվածը սահմանում է, որ փոխհատուցումը և զիջումների և այլ պարտավորությունների դադարեցումը ժամանակավոր միջոցներ են, որոնք կիրառվում են այն դեպքում, երբ ողջամիտ ժամկետում որոշումները և խորհրդատվական եզրակացությունները չեն կատարվում:

Անդրադառնալով Համաձայնագրի շրջանակներում կիրառվող փոխհատուցման ընթացակարգին՝ ցանկանում ենք ընդգծել, որ այն էականորեն տարբերվում է իրավունքի այլ ճյուղերում գործող փոխհատուցման կարգից: Մասնավորապես, Համաձայնագրի 22-րդ հոդածի 1-ին մասը նշում է, որ փոխհատուցումը կամավոր բնույթ է

կրում և կիրառվող փոխհատուցման ձևը պետք է համապատասխանի վեճին առնչվող համաձայնագրին:

Այսպիսով Համաձայնագրի 22-րդ հոդվածի բովանդակության մեկնաբանությունից բխում է, որ փոխհատուցման կամավորությունը առաջին հերթին նշանակում է, որ իրավախախտ պետությունը որևէ պարտականություն չի կրում փոխհատուցում տրամադրելու, իսկ հայցող պետությունն որևէ պարտավորություն չունի ձգտելու հասնել փոխհատուցման, եթե ցանկանում է ուղղակիորեն դիմել Համաձայնագրի 22-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հակազդման միջոցների օգնությամբ:

Ընդ որում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ փոխհատուցման առաջարկը հայցող պետությանը հիմնականում կատարում է իրավախախտ պետությունը: Համաձայնագրի 22-րդ հոդվածի 2-րդ կետը հստակ անդրադարձել է այդ խնդրին՝ նշելով, որ եթե անդամ պետությունը գիտակցում է, որ ողջամիտ ժամկետում չի կարողանալու կատարել որոշումները և խորհրդատվական եզրակացությունները, ապա մինչև ողջամիտ ժամկետի լրանալը պետք է սկսի բանակցություններ մյուս կողմի հետ՝ երկկողմանի ընդունելի փոխհատուցման կարգ որոշելու համար: Եթե փոխհատուցման կարգի և ձևի վերաբերյալ համաձայնություն ձեռք չի բերվում ողջամիտ ժամկետի լրանալուց հետո 20 օրվա ընթացքում, ապա հայցող կողմն իրավունք ունի դիմել Վեճեր քննող մարմնին՝ ստանալու թույլտվություն զիջումները կամ այլ պարտավորությունները խախտված համաձայնագրի շրջանակներում դադարեցնելու համար:

Անդրադառնալով հնարավոր փոխհատուցման կարգին՝ ցանկանում ենք ընդգծել, որ փոխհատուցումը կարող է տրամադրվել տարբեր ձևերով, մասնավորապես, ավելացնել հայցող պետության շուկայի հասանելիությունը կամ դրամական փոխհատուցման ձևով: Էականը փոխհատուցման դեպքում այն է, որ ընտրված փոխհատուցման ձևը պետք է համապատասխանի խախտված համաձայնագրով կարգավորվող իրավահարաբերության բնույթին:

Եվ թեև միջազգային իրավունքի տեսանկյունից փոխհատուցումն առավել ընդունելի պատասխանատվության միջոց է, սակայն պետությունները այս միջոցին հաճախակի չեն դիմում, ինչն միգուցե պայմանավորված է Համաձայնագրում նախատեսված դրույթների

փոփոխման անհրաժեշտությամբ: Մասնավորապես արդյունավետ կլինեն, եթե փոխհատուցման տրամադրումը ոչ թե իրավախախտ պետության իրավունքը լինեն և պայմանավորված լինեն վերջինիս կամահայտնությամբ, այլ Համաձայնագրում համապատասխան փոփոխության արդյունքում հնարավորություն տրվեր հայցող պետությանը, անկախ իրավախախտ պետության փոխհատուցում կատարելու առաջարկից, նմանատիպ առաջարկ ներկայացնել իրավախախտ պետությանը: Իհարկե բացառված չէ, որ այդ պարագայում ևս իրավախախտ պետությունը կարող է չկատարել այդ պահանջը, ինչպես որ չի կատարել կայացված որոշումը և խորհրդատվական եզրակացությունը, սակայն միաժամանակ նման իրավակարգավորման պարագայում հայցող պետությունը հնարավորություն կունենար այն դեպքում, երբ իրավախախտ պետությունը փոխհատուցման առաջարկ չի ներկայացնում, նախաձեռնությունն իր ձեռքն վերցնել և նման առաջարկ անել՝ խուսափելով հակազդման միջոցներ կիրառելու պահանջ ներկայացնելուց, հատկապես այն պարագայում, երբ հակազդման նման միջոցների կիրառումը հաճախ նաև իր բացասական ազդեցություն է ունենում անմիջականորեն հայցող պետության տնտեսության և տնտեսվարող սուբյեկտների, քաղաքացիների վրա:

Երկրորդ փոփոխությունը, որ առաջարկվում է տեսական գրականության մեջ, վերաբերում է Համաձայնագրում դրամական փոխհատուցման նախատեսմանը: Ընդ որում՝ այդ տեսակետի հեղինակները գտնում են, որ փոխհատուցումտ պետք է տրվի ոչ թե անմիջականորեն պետությանը, այլ այն տնտեսվարող սուբյեկտներին, ովքեր անմիջականորեն տուժել են իրավախախտ պետության կողմից:<sup>1</sup>

Վերոգրյալ տեսակետն մեզ համար ընդունելի է մասնակիորեն, քանի որ, ինչ վերաբերում է Համաձայնագրում դրամական փոխհատուցման նախատեսմանը, ապա դա ավելնորդ է, քանի որ Համաձայնագիրը չի սահմանում փոխհատուցման տեսակները՝ թողնելով յուրաքանչյուր անգամ փոխհատուցման տեսակների ընտրությունը անդամ պետությունների հայեցողությանը, ընդ որում Համաձայնագիրը չի արգելում կամ բացառում դրամական փոխհատուցման հնա-

---

<sup>1</sup> St 'u, **М. Т., Федорова**, Механизм разрешения споров в рамках всемирной торговой организации и контроль за исполнением решений в этой области, диссертация, Санк-Петербург, 2004 թ., էջ 113-114:

րավորությունը, այսինքն պետությունները գրկված չեն նաև որպես փոխհատուցման տեսակ ընտրել դրամական փոխհատուցումը: Իսկ ինչ վերաբերում է այդ դրամական փոխհատուցումը տուժած տնտեսվարող սուբյեկտներին տրամադրելու առաջարկին, ապա գտնում ենք, որ այդ հարցը դուրս է ԱՀԿ-ի կարգավորման շրջանակներից, անմիջականորեն վերաբերում է անդամ պետությունների ներքին իրավասության մեջ մտնող հարցերի շրջանակին և չի կարող կարգավորվել ԱՀԿ-ի շրջանակներում, թեև պետությունները գրկված չեն բանակցությունների ընթացքում որոշել, որ տրամադրվող գումարը բաշխվելու է այն տնտեսվարող սուբյեկտներին, որոնք տուժել են իրավախախտման արդյունքում:

Ընդ որում ցանկանում ենք նշել, որ պրակտիկայում նմանատիպ կարգավորում ԱՀԿ-ի շրջանակներում եղել է: Մասնավորապես «US-Section 110(5) of the US Copyright Act» գործի շրջանակներում (ԱՄՆ և ԵՄ) կողմերը 2001 թ. դեկտեմբերին պայմանավորվեցին փոխհատուցում ոչ թե իրավախախտ պետության կողմից իր իրավունքների ազատականացման վերաբերյալ, այլ դրամական հատուցման ձևով, ընդ որում այդ փոխհատուցումը տրվելու էր վնաս կրած սուբյեկտներին:<sup>1</sup>

Ընդ որում՝ անդրադառնալով դրամական փոխհատուցման խնդրին՝ գտնում ենք, որ թեև այն Համաձայնագրի շրջանակներում արգելված չէ, և պետությունները կարող են կիրառել նաև փոխհատուցման այդ տեսակը, սակայն վերջինիս կիրառումը չպետք է համատարած բնույթ ունենա և կիրառելի լինի բոլոր դեպքերի համար, քանի որ փոխհատուցման այդ տեսակի կիրառումը կարող է հակասել նախ ԱՀԿ-ի հիմնական սկզբունքներին, ինչպես նաև վնասել զարգացող պետությունների շահերը, քանի որ հաճախ իրավախախտ պետությանն առավել ձեռնտու է որոշակի դրամական փոխհատուցում վճարել, սակայն իրավախախտումը չդադարեցնել:

ԱՀԿ-ի շրջանակներում կիրառվող պատասխանատվության մյուս տեսակը զիջումների և այլ պարտավորությունների դադարեցումն է, այն է՝ հակազդման միջոցների կիրառումը: Համաձայնագրի 22-րդ հոդվածի 3-րդ կետը հստակ սահմանում է, թե հակազդման

---

<sup>1</sup> *St' u, Carmody C. Remedies and Conformity under the WTO Agreement* *IIJournal of International Law*. 2002թ., էջ 319:

միջոցները որ ոլորտներում կարող են կիրառվել: Ըստ ընդհանուր կանոնի այդ միջոցները պետք է կիրառվեն այն նույն ոլորտում, որում քննախումբը արձանագրել է խախտում: Եթե պետությունը գտնում է, որ նույն ոլորտում հակազդման միջոցների կիրառումը արդյունավետ չէ, կարող է հակազդման միջոցներ կիրառել նույն համաձայնագրի այլ ոլորտներում, իսկ եթե դա նույնպես արդյունավետ չէ, ապա այդ միջոցները կարող է կիրառել այլ համաձայնագրերի շրջանակներում:

Միաժամանակ ցանկանում ենք արձանագրել, որ հակազդման միջոցների կիրառման համար Վեճերը քննող մարմնից թույլտվություն ստանալու ընթացակարգի վերաբերյալ Համաձայնագրում առկա է որոշակի իրավական անհստակություն, ինչն տարբեր մեկնաբանությունների առիթ է տալիս:

Մասնավորապես, համաձայնագրի 21-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է, որ եթե պետությունների միջև վեճ է առաջանում այն հարցի շուրջ՝ արդյոք իրավախախտ պետությունը կատարել է որոշումը կամ խորհրդատվական եզրակացությունը, թե ոչ, կողմերից յուրաքանչյուրն իրավասու է սկսել վեճերի կարգավորման գործընթաց և եթե հնարավոր է դիմել այն քննախմբին, որը ի սկզբանե քննել է գործը: Քննախումբը իրեն դիմելուց հետո 90 օրվա ընթացքում պետք է որոշում կայացնի իր որոշումը կատարված լինելու կամ չլինելու վերաբերյալ:

Միաժամանակ Համաձայնագրի 22-րդ հոդվածի 2-րդ կետը հնարավորություն է տալիս հայցող պետությանը կատարման համար տրամադրված ողջամիտ ժամկետի ավարտից հետո 20 օրվա ընթացքում դիմել Վեճերը քննող մարմնին՝ հակազդման միջոցներ կիրառելու թույլտվություն ստանալու համար: Այսինքն ստացվում է մի իրավիճակ, երբ մի կողմից իրավախախտ պետությունը վիճարկում է իր կողմից որոշումների կատարման փաստը, սակայն նույն ժամանակ հայցող պետությունը արդեն իսկ հնարավորություն ունի դիմելու և ստանալու հակազդման միջոցներ կիրառելու թույլտվություն, ընդ որում Համաձայնագիրը չի նախատեսում որևէ հնարավորություն, որպեսզի օրինակ Վեճերը քննող մարմինը կասեցնի այդ թույլտվության տրամադրումը մինչև քննախմբի կողմից կայացված որոշման կատարման կամ չկատարման վերաբերյալ որոշման կայացումը: Ավելին Համաձայնագրում որևէ դրույթ առկա չէ, որը կար-

գելի հայցող պետությանը որոշման կատարման վերաբերյալ վեճի քննության ընթացքում դիմել հակազդման միջոցներ ստանալու համար:

Ընդ որում, վերոգրյալ խնդիրը առաջացավ «EC – Bananas III»-ի գործի շրջանակներում, երբ ԱՄՆ-ն դիմեց հակազդման միջոցներ կիրառելու համար, այն դեպքում, երբ Վեճերը քննող մարմինը դեռ որոշում չէր կայացրել այն մասին՝ արդյոք ԵՄ-ն կատարել է նախկինում կայացված որոշումը, թե ոչ:<sup>1</sup>

Այս գործից հետո ԱՀԿ անդամ պետությունները համաձայնության եկան առ այն, որ պետությունները կարող են հակազդման միջոցներ կիրառելու թույլտվություն ստանալու համար դիմել միայն Վեճերը քննող մարմնի կողմից նախկինում կայացված որոշման կատարման վերաբերյալ որոշում կայացնելուց հետո, սակայն համապատասխան փոփոխություն չկատարվեց համաձայնագրում, թեև մենք գտնում ենք, որ Համաձայնագիրը պետք է հստակ կարգավորի այս խնդիրը՝ հետագայում նման իրավիճակներից խուսափելու համար: Մասնավորապես, առաջարկում ենք, որ համաձայնագրով նախատեսվի դրույթ այն մասին, որ եթե պետությունների միջև վեճ է առաջանում որոշման կատարման կապակցությամբ, ապա հայցող պետությունը չի կարող դիմել հակազդման միջոցներ կիրառելու թույլտվություն ստանալու համար, մինչև Վեճերը քննող մարմինը կատարման վերաբերյալ վերջնական որոշում չկայացնի:

*Ани Атанесян*

*Аспирант кафедры Европейского и международного права ЕГУ*

## **ВИДЫ ОТВЕТСТВЕННОСТИ, ПРИМЕНЯЕМОЙ В ПРОЦЕССЕ РЕШЕНИЯ СПОРОВ ВСЕМИРНОЙ ТОРГОВОЙ ОРГАНИЗАЦИЕЙ**

В данной работе автор делает ссылку на виды ответственности , применяемые Всемирной торговой организацией в процессе урегулирования споров. Были изучены правовые основы, порядок и

---

<sup>1</sup> St´ u European Communities–Regime for the importation, Sale and distribution of Bananas, /Էլեկտրոնային աղբյուր, [https://www.wto.org/english/tratop\\_e/dispu\\_e/cases\\_e/ds27\\_e.htm/](https://www.wto.org/english/tratop_e/dispu_e/cases_e/ds27_e.htm/), դիտման ամսաթիվ 20.11.2015 թ.:

сроки применяемой в рамках ВТО ответственности. Отдельным объектом изучения стали две основные виды ответственности-компенсация и временное приостановление уступок. Были обсуждены особенности правового урегулирования этих двух видов ответственности, существующие правовые неясности, проблемы, встречающиеся в практике, представляя предложения для заполнения существующих правовых пробелов.

*Ani Atanesyan*

*PHD Student of the YSU Chair of European and International Law*

## **THE TYPES OF THE RESPONSIBILITY USED BY THE WORLD TRADE ORGANIZATION IN THE FRAMEWORK OF THE DISPUTE SETTLEMENT**

In this article the author researches the types of the responsibility used by the World Trade Organization in the framework of the dispute settlement. The legal basis, regime and terms of responsibility used by the WTO are studied by the author. The main types of responsibility, namely the compensation and the suspension of concessions, have become the separate subject of study. The author discusses the features of legal regulation of this two types of liability, the current legal uncertainties and the issues faced in the practice submitting the proposals for filling the current legal gaps.

**Բանալի բառեր:** *ԱՀԿ, Առևտրի Համաշխարհային Կազմակերպություն, փոխհատուցում, զիջումների և այլ պարտավորությունների դադարեցում, պատասխանատվություն:*

**Keywords:** *WTO, World Trade Organization, compensation, suspension of concessions, responsibility.*

**Ключевые слова:** *Ответственность, компенсация, временное приостановление уступок, ВТО, Всемирная торговая организация.*